ամեն 20—25 գլուխ ոչխարի կամ այծի համար մի գառ կամ երկու հöլ՝ ուլ, սակայն այնպես, որ կեսն անպատճառ լինի էգ, թեկուզև էգերը ծնված լինեին շատ ավելի պակաս.

Նույնպես նաև շորեղեն՝ արխալուղ, վոտաշոր, շապիկ, վրայից ձգելու համար էշա և 5—6 ոչխարի բուրդ[53]։

Եթե ոչխարի թիվը 300-ից ավելի էր լինում, վարձվում էր մի այլ չոբան ևս։

Կերակրվում էր չոբանը ոչխարատիրոջ հաշվին՝ ստանալով օրական 8 լավաշ և այլ մթերքներ։

Չոբանը պարտական էր, բացի ոչխարը պահելուց, խուզել, մասնակցել կթելուն և արխաշը շաբաթական երկու-երեք անգամ մաքրել։ Կթելը սակայն շատ անգամ, մանավանդ սարերում, կնոջ գործն էր։ Դրա համար չոբանը որոշ ժամին քշում էր ոչխարը նշանակված տեղը՝ գյուղից կամ օթայից ոչ հեռու, ուր գալիս էին կթող կանայք, իսկ կանոնարածնէրը կանոնէրին և հöլէրին մոտեցնում էին մայրերին։

Չոբանի ընկերը շունն էր, որի առանձին տեսակն է զարգացել տեղում։ Նրա կերակրելն էլ ոչխարատիրոջ հաշվին էր։ Շունն առանձնապես անհրաժեշտ էր, քանի որ գավառում գայլերը բազմաթիվ էին և մյուս կողմից՝ պակաս չէին նաև գողերն ու ավազակները։ Որպեսզի գայլը հոտին չվնասի, տերը մի ոչխար մատաղ էր բերում հատկապես այդ նպատակին։

Հիվանդ ոչխարը բժշկելու համար, բացի ժողովրդական դեղերից՝ դիմում էին սնահավատական միջոցների։ Ամենից տարածված միջոցն էր՝ հոտը քշել մի սրբավայր և այնտեղ երեք անգամ քշել սրբավայրի շուրջը և մատաղ մորթել։ Այսպես, օրինակ՝ Ողջու չոբանը դաբաղավ[54] հիվանդ ոչխարը տանում էր դեպի Կալեր գյուղի մոտ եղած փոքրիկ մատուռը և այնտեղ մատաղ բերում։

Արծվանիկում նվիրական երկու բոշնիների տակ եղած գերեզմանաքարերի վրա աղ էին ածում և հիվանդ ոչխարին կերակրում։ Հիվանդ հոտին ջուր էին խմացնում հարևան Չափնի գյուղի նվիրական աղբյուրից։ Շատ բնորոշ է մի այլ միջոց դաբաղ հիվանդության դեմ, որը գործադրում էր օղակի միջով անցկացնելու եղանակը[55]։ Երկու ուղղաձիգ նստեցրած սյուների գլխներին դնում էին մի գերան և այդպես ստացված շինովի դրվազա-ի վրա կամ բակի իսկական դրվազա-ի վերին գերանի վրա նստեցնում մի «արդար» աղջիկ կամ մի առաքինի կյանքով հայտնի պառավ և հիվանդ տավարը անց էին կացնում այդ դարբասի միջով, իսկ վերև նստած աղջիկը կամ կինը մի փայտով խփում էր տէփորին և կանչում թրքերեն՝

Գա՜լդի թաբախ... Եկա՜վ տէփորին...
Չը՜խ, դաբաղ... Կորչի՜, դաբաղ...

Ծաղիկ հիվանդությունից բժշկվելու համար հատուկ զորություն ունեցող սպիտակ կախարդական քար կար, որը ձգում էին աղի քսակի՝ պարկի մեջ, հետո այդ աղը բաց անում ջրի մեջ և ոչխարին խմացնում։ Աղի քսակը զորգի

---

53 Գորիսում զրգամուտին՝ կիրակնամուտին չոբանն ամբողջ սուրուն՝ հոտը քշում էր իր տան առջև և ոչխարը կթում իր օգտին. դա նրա հախն էր՝ վարձը։ Գառնարածն ամեն մի գառան համար կիրակի օրը ստանում էր մեկ լավաշ, նաև մի փոքր դրամ։ Զմեռվա համար չոբանը ստանում էր ալջաղ՝ ձեռնոցներ, որոնք գործվում էին դազիլի՝ այծի մազի տակի մազից՝ թիֆտիկից։ Գործում էր սովորաբար հենց չոբանի ընտանիքը։

54 Ոտներին բուսած խոցերով։

55 Օրինակ՝ Գորիսում։